ՀՏԴ 281.6(479.25) + 947.925

Doi:10.54503/0135-0536-2024.1-40

ՎԱՆԱՆԴԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԹԵՄԸ (IV–VIII դարեր)*

ԱՇՈՏ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ եպիսկոպոսություն, թեմ, Վանանդ, հնագույն, գլխավոր, կենտրոնական, դիրք, միջնադար, ազգային-եկեղեցական, կաթողիկոս:

Նախաբան

Հայոց եկեղեցու վաղ շրջանի պատմության ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն առանձին թեմերի սկզբնավորման, ձևավորման, ընթացքի վերաբերյալ անդրադարձները, որոնց շնորհիվ երևան են հանվում ուշագրավ իրադարձություններ, իրողություններ: Դրանք լրացնում են եպիսկոպոսությունների վերաբերյալ ցարդ հայտնի խմացությունները, տեղայնացնում, ամբողջացնում այդ եկեղեցավարչական բարձրագույն կառույցների մասին պատկերացումները:

IV–VIII դդ. Վանանդի եպիսկոպոսությունը Հայաստանի ներեկեղեցական, ներքաղաքական կյանքում ունեցել է առանցքային նշանակություն, հատկապես խնդրո առարկա ժամանակաշրջանում, երբ այդ թեմի հինգ թեմակալ դարձել են Հայոց Մեծաց կաթողիկոսներ՝ վճռորոշ դեր խաղալով ոչ միայն ներհայկական, այլև՝ միջպետական, միջեկեղեցական հարաբերություններում:

Վանանդի եպիսկոպոսության հիմնումը, դրա թեմակալներն ու նշանավոր եկեղեցական գործիչները IV–V դդ.

Վանանդի եպիսկոպոսությունը Հայաստանի հնագույն թեմերից էր, որը ներգրավվել է Սբ. Գրիգոր Լուսավորչի հաստատած Հայոց եկեղեցու անդրանիկ նվիրապետության մեջ՝ զբաղեցնելով 11 / 12 տեղը՝ առաջնորդությամբ Տիրիկեսի, որի հոգևոր իրավասության ներքո էին գտնվում Այրարատ աշխարհի Վանանդ, Աբեղյանք, Գաբեղյանք գավառները[1]: Հետագայում վերջինս ներառվել է Արշարունիքի եպիսկոպոսության կազմում, որտեղ էր և՝ Շիրակը:

Ավելի ուշ Սբ. Գրիգոր Լուսավորչի վերակազմավորած նվիրապետությունում, համաձայն Ուխտանեսի ներկայացրած 30 աթոռակալ եպիսկոպոսությունների ցանկի, «հինգետասաներորդն Վանանդայ» թեմն է[2]: Այսինքն՝ լինելով 15-րդը՝ Վանանդի աթոռն զբաղեցրել է կենտրոնական դիրք:

---

* Ներկայացվել է 20. IV. 2023 թ., գրախոսվել է 19. V. 2023 թ., ընդունվել է տպագրության 22. III. 2024 թ.:

[1] Ղ ա զ ա ր յ ա ն. 1996, 193–194:

[2] Ուխտանէս եպիսկոպոսի Պատմութիւն Հայոց. 1871, 100:

Ըստ Հայր Ղ. Ալիշանի մատենագրական պրպտումների՝ IV դարում (ավելի ստույգ՝ այդ հարյուրամյակի 2-րդ կեսին) Վանանդի եպիսկոպոս է հիշատակվում Զորթվազը. «Եւ Զորթուազ եպիսկոպոս Վանանդայ գաւառին, այր սուրբ պարկեշտ արժանի Աստուծոյ, արբեալ Ոգւով սրբով. Քրիստոնէութեամբ գնայր առաջնորդէր իւրում ժողովրդեանն ըստ կամացն Աստուծոյ»[3]:

Վանանդի եպիսկոպոսն իր գործուն մասնակցությունն է ունեցել V դարի կեսի Հայոց ազգային-եկեղեցական կարևորագույն ժողովներում: Պարսից Հազկերտ Բ-ի (439–457) և մոգպետ Միհրներսեհ Վզուրկի՝ հայերի կրոնափոխության և զրադաշտականության ընդունման հրովարտակին ու նամակին պատասխանելու համար 449 թ. Արտաշատում գումարված Հայոց մեծամեծների ժողովի 17 եպիսկոպոսների շարքում Եղիշեն 14-րդը նշում է՝ «ԳԱԴ եպիսկոպոս Վանանդայ»[4], իսկ Փարպեցու ցանկում նա 10-րդն է՝ «Տէր Գադ՝ Վանանդեայ եպիսկոպոս»[5]: Ժողովին ներկա 18 նախարարների մեջ է նաև «Առաւան Վանանդեցի»[6]:

Ավելի վաղ՝ Շահապիվանի 444 թ. կանոնական ժողովի մասնակից 40 եպիսկոպոսների սակավ հիշված անունների թվում է «Գադ»-ը[7], որը, հնարավոր է, նույն «Գադ»-ը լինի: Հայտնի է, որ Շահապիվանի գումարմանը, բացի եպիսկոպոսներից, հրավիրված են եղել նաև «երիցունք եւ սարկաւագունք բազում»[8]: Երեցներից մեկն էլ Սահակ-Մեսրոպյան աշակերտության ներկայացուցիչներից «Ղեւոնդ սուրբն» էր[9] Վարդանանց շարժման ոգեշնչողը՝ «Ավարայրի արծիվը»[10]: Նա «Ծննդեամբ Վանանդ գաւառի Իջաւանք գիւղէն էր (այսօրուան Կարսի շրջանէն), բայց հաւանաբար պաշտօնի բերմամբ իր գործունեութեան դաշտը եղաւ դրացի Բագրեւանդ գաւառը (այսօրուան Տիատինի եւ Աղրի-Ըղտրրի շրջանը)»[11]: Եղիշե պատմիչը գյուղը կոչում է «Իջաւան»[12]: Ավարայրից հետո քաջակորով Սբ. Ղեւոնդ Վանանդեցին ութ հոգեւորականների հետ, որոնց մեջ էր նաև Հայոց կաթողիկոս Հովսեփ Ա Հողոցմեցին (440–454), պարսիկների կողմից աքսորվել են՝ հանուն Քրիստոսի տոկացել չարչարանքների, ապա 454 թ.՝ նահատակվել: Սրբադասված ինը նահատակյալ հոգեւորականներն աննկուն վանանդեցի երեցի անունով կոչվում են Սբ. Ղեւոնդյանք, որոնց հիշատակը Հայ եկեղեցին կատարում է «Բուն Բարեկենդանին նախորդող շաբաթ օրը: Սբ. Ղեւոնդյանց նվիրված «Մանկունք» շարականի մեջ նրան են վերաբերվում հետեւյալ տողերը.

Լուսաւորիչն ամենեցուն Ղեւոնդէի Ս. Վարդապետ
Խոհական մեծ խորհրդով խրատեալ լցոյց զաշակերտեալն ...»[13]:

---

[3] Ա ղ ի շ ա ն. 1890, 76, այդ մասին տե՛ս նաև՝ Բ ո ւ զ ա ն դ. 1987, 410–411:
[4] Ե ղ ի շ ե. 1989, 56:
[5] Փ ա ր պ ե ց ի. 1982, 100:
[6] Փ ա ր պ ե ց ի. 1982, 100:
[7] Օ ր մ ա ն ե ա ն. 2001, 379:
[8] Կանոնագիրք հայոց. 1964, 427:
[9] Օ ր մ ա ն ե ա ն. 2001, 379:
[10] Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան. 2002, 655:
[11] Գ ա լ ո ւ ս տ ե ա ն. 1997, 85:
[12] Ե ղ ի շ ե. 1989, 360:
[13] Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան. 2002, 655:

Վարդանանց ժամանակների նշանավոր կրոնավորներից, որը գործել է Վանանդի եպիսկոպոսության սահմաններում, Սուրբ Թաթուլ Ճգնավոր ուսուցչապետն էր: Նա նույնպես Սահակ-Մեսրոպյան աշակերտներից էր, ով Ավարայրից հետո՝ պարսկական իշխանությունների հետապնդումներից խույս տալու նպատակով, ավագ եղբոր Վարոսի հետ ճգնակեցության է հեռացել Վիշապաձոր կոչվող վայրը (ներկայիս Կաղզվան քաղաքի մոտ)՝ Գաբեղյանց լեռներում: Այստեղ նա «վարել է «հրեշտակակրոն» կյանք և հռչակվել որպես աստվածառաք տեսիլների տեսանող: Առանձնական ճգնության նվիրվելու համար եղբայրները բաժանվում են. Թաթուլը մնացել է նույն տեղում, իսկ Վարոսը ճգնությունը շարունակել է Դիցմայր (Դիցմայր) կոչվող քարանձավում: Թաթուլի հռչակը լսելով՝ նրա մոտ հավաքվել են ճգնավորներ և կազմել ուխտավոր ճգնակյացների միաբանություն: Այնտեղ կառուցել են եկեղեցի, որը միաբանության առաջնորդի անունով կոչվել է Թաթուլի վանք (Թաթլա կամ Թաթլո վանք): Իր աշակերտներից Թումասին (Թովմաս) առաջնորդ նշանակելով՝ Թաթուլը ճգնակեցությունը շարունակել է Մայրաձոր կոչված մենաստանում՝ մինչև իր վախճանը, որից հետո նրա մարմինը փոխադրվել և ամփոփվել է յուրանուն վանքում»[14]*: Հայտնի են Թաթուլի վանահայրական խրատները Թովմասին*[15]*, որոնք, կարծում ենք, ընդունելի են եղել Հայոց վաղմիջնադարյան վանքերում: Հայոց եկեղեցին երեք ճգնակյաց սրբերի՝ Թաթուլի, Վարոսի, Թումասի «հիշատակը տոնում է խաչվերացից հետո՝ 5-րդ կիրակին հաջորդող երկուշաբթի օրը՝ ս. Անտոն և ս. Կրոնիդես ճգնավորների հիշատակի հետ միասին»*[16]*:*

V դարի երկրորդ կեսին Վանանդի եպիսկոպոս է եղել, հետագայում՝ Հայոց կաթողիկոս Սբ. Գյուտ Ա. Արահեզացին (461–471/4), որը Տայքի Արահեզ գյուղից էր: Բանասեր-պատմաբան Արծրունի Սահակյանի տեսակետով՝ Գյուտ Ա. Արահեզացին Տայքի Մամիկոնյան տոհմից էր[17]*: Իսկ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը մատենագրական սկզբնաղբյուրների համեմատական և ժամանակագրական քննությամբ հանգել է այն եզրակացության, որ Գյուտ Արահեզացին նույն Գագ եպիսկոպոսն է*[18]*: Սակայն դրանք կարող էին տարբեր անձինք լինեին, քանի որ ենթադրվում է՝ Գյուտը «մինչև ձեռնադրվելը կոչվել է Եվսեբիոս և այդպես էլ ճանաչվել է իր արտասահմանյան ուման ժամանակ՝ օտար ընկերակիցներից (Թեոդորետոս Կյուրիացի և այլք)»*[19]*: Գյուտը Սահակ-Մեսրոպյան կրտսեր աշակերտության ներկայացուցիչներից էր՝ «այր լի գիտութեամբ հայովս և առաւել լեալ յունիւն, յորդասաց բանիւ և առատաբուղխ վարդապետութեամբ»*[20]*, որն «զդպրութիւն գիտութեանս մերոյ եւ զիմաստ բանաւոր ումանց յաշխարհին Հոռոմոց ուսեալ»*[21] *և ուներ «անդ*

---

[14] *Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան. 2002, 378:*

[15] *Խրատները տե՛ս Սոփէրք հայկականք. 1854, 54–59, Գալուստեան. 1997, 147–154:*

[16] *Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան. 2002, 378:*

[17] *Սահակյան. 2016, 28:*

[18] *Օրմանեան. 2001, 482:*

[19] *Սահակյան. 2016, 28:*

[20] *Փարպեցի. 1982, 264:*

[21] *Փարպեցի. 1982, 274:*

ծանօթք բազում և ուսումնակիցք»[22]: Այս փաստերը բավարար էին ուրացյալ մաղխազ Գաղիշո Խոռխոռունու համար՝ հետագայում պարսից Պերոզ (459–484) արքայի մոտ կաթողիկոսին զրպարտելու բյուզանդամետության մեջ: 471 թ. հեռացվելով կաթողիկոսական աթոռից՝ Գյուտը վերադառնում է «ի գեօղն, որ կոչի Ողմսու (Ողմուս– Ա. Մ.) գեօղ, ի գաւառին Վանանդայ»[23]: Ենթադրելի է, որ հիշյալ գյուղը եղել է Վանանդի թեմի առաջնորդանիստը:

Գյուտ Արահեզացին կաթողիկոսական պաշտոնավարման ընթացքում մեծ դերակատարություն է ունեցել երկրի ներքաղաքական, հոգևոր կյանքում: 464 թ. «Վաղարշապատի Կաթողիկե եկեղեցում հոգեշունչ քարոզներով դիմավորել է պարսկական գերությունից վերադարձած հայ նախարարներին՝ Ավարայրի ճակատամարտում ողջ մնացած հերոսներին: Հաստատել և եկեղեցական տոնացույց է մտցրել Ավարայրի նահատակների հիշատակի օրը»[24]: Պայքար է մղել ժամանակի հերձվածների (նեստորականություն) և այն աղանդների դեմ, որոնք մերժում էին խաչը (մծղնյաններ, պավլիանիտներ, Հայոց աղանդ): Նրա խնդրանքով է Դավիթ Անհաղթ փիլիսոփան ճոնել խաչի «Բարձրացուցէք» ներբողյանը[25]:

Ըստ Արծ. Սահակյանի պրպտումների՝ աքսորից վերադարձած և Ողմուսում հաստատված Գյուտ Արահեզացուն կաթողիկոսական գահի վրա փոխարինում է իր եղբորորդին՝ Տեր Հովհանը (471/4–481/2)[26], որի անունը բացակայում է Հայոց հովվապետների գավազանագրքից: Չի բացառվում՝ Տեր Հովհանը կաթողիկոսական գահին բարձրացած լինի Վանանդի եպիսկոպոսական աթոռից, որտեղ պիտի որ կայացած լիներ հորեղբոր՝ Գյուտ Արահեզացու դաստիարակության ներքո:

Վանանդի եպիսկոպոսությունը VI–VIII դդ.

Ենթադրելի է՝ թեմակալ Հովհանին Վանանդի եպիսկոպոսական աթոռին հաջորդել է Բաբկեն Ողմսեցին, որը հետագայում օծվել է Հայոց Մեծաց կաթողիկոս: Բաբկեն Ա Ողմսեցին (490–516) 506 թ. գումարում է Դվինի Ա ժողովը, որին մասնակցել է 14 նախարար և 20 եպիսկոպոս: Նախարարների շարքում 5-րդը հիշատակվում է՝ «Զիկ Վանանդայ տէր»[27]: «Գիրք թղթոցի»՝ Մ. Օրմանյանի մեջբերած ցուցակում Զիկը ներկայացված է իր ազգանվամբ՝ «Դիմաքսեան»[28]: Ավելորդ չէ նշել, որ ըստ Սահակյան (Վռամական) Գահնամակի՝ Դիմաքսաններն ունեցել են չորս ճյուղ՝ Հայոց արքունիքում զբաղեցնելով համապատասխանաբար 34-րդ, 35-րդ, 37-րդ, 67-րդ գահերը: Նրանք ժառանգական տիրույթներ են ունեցել Շիրակում, Տայք նահանգի Բուխա

---

[22] Փարպեցի. 1982, 274:

[23] Փարպեցի. 1982, 280:

[24] Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան. 2002, 217:

[25] Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան. 2002, 217:

[26] Սահակյան. 2016, 30–31:

[27] Գիրք թղթոց. 1994, 148: Հայտնի է, որ Դվինի Ա ժողովին, որտեղ դատապարտվել են քաղկեդոնականությունն ու նեստորականությունը, մասնակցել են Վրաց ու Աղվանից կաթողիկոսները՝ իրենց եպիսկոպոսներով, ինչպես նաև՝ Պարսկաստանի քրիստոնյա ուղղափառ ասորիների պատվիրակությունը (տե՛ս Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան. 2002, 276):

[28] Օրմանեան. 2001, 583:

գավառում՝ Բողբերդ (այժմ՝ Բուղա-կալա) ամրոց-նստավայրով: Դիմաքսյանների մի ճյուղը կալվածքներ է ունեցել Վանանդում[29]:

Հայոց տանուտերերից Թաթուլ Դիմաքսյանին, որին Սբ. Վարդան Մամիկոնյանն Ավարայրի ճակատամարտից առաջ նշանակում է երրորդ (աջակողմյան) գնդի զորագլուխ, Եղիշե պատմիչը կոչում է Վանանդացի[30], իսկ Ղազար Փարպեցին՝ «տեառն Վանանդայ»[31], «զիշխանն տանն Վանանդեայ»[32]: Ավելի առաջնակարգ եղել է Վանանդի ճյուղը, քանի որ Շիրակում ու Տայքում կալվածքներ ունեցող Դիմաքսյանները պիտի վասալական կախվածության մեջ լինեին Կամսարականներից և Մամիկոնյաններից, իսկ Վանանդում նրանք իրենց գավառի լիիրավ տերն էին, որի պատճառով էլ աղբյուրներում կոչվում են «Տեառն Վանանդեայ»: Հարկավ, Սահակյան Գահնամակում 67-րդ գահը զբաղեցնում է Շիրակի Դիմաքսյանը, իսկ 14-րդում նստել է Վանանդացին[33], որին նույնպես պետք է Դիմաքսյան համարել: Եթե սրանց էլ հավելենք Գահնամակում 63-րդ գահն ունեցող «Վանանդացին երկրորդին»[34], ապա ստացվում է Դիմաքսյանների վեց ճյուղ: Նրանք, ըստ Զորանամակի, Հայոց բանակին տվել են 1600 հեծյալ (1000-ը՝ Վանանդի տերը, 600՝ Դիմաքսյանները)[35]: Ուշադրության է արժանի այն փաստը, որ Արտաշատի 449 թ. ժողովին, բացի Առավան Վանանդեցուց, մասնակցել է նաև Հմայակ Դիմաքսյանը[36]: Վերջինս, պատմաբան Համազասպ Ոսկյանի բնութագրմամբ, «մէկն է անոնցմէ, որոնք կը համոզեն Վարդան յունական հողերը չանցնիլ եւ տառապանքի այդ ծանր օրերու կրօնի ու հայրենիքի համար կուրծք տալու եւ անոնց պաշտպան կանգնիլ»[37]:

Վերադառնալով Դվինի Ա ժողովի մասնակիցներին՝ նկատենք, որ, ի տարբերություն նախարարների, եպիսկոպոսների կազմում, որքան էլ տարօրինակ է, ուղղակի չի հիշատակվում Վանանդի թեմակալը: Սակայն հարկ է ուշադրություն դարձնել այն կարևորագույն հանգամանքին, որ բոլոր թեմերը ներկայացված են մեկ եպիսկոպոսով, իսկ Բասենը՝ երկու՝ «Փոկաց Բասենոյ», «Սամուէլ Բասենոյ»[38]: Կարծում ենք՝ Բասենի այդ երկու վիճակավոր վերակացուներից մեկը Վանանդի թեմակալն է, քանի որ այդ գավառն ավելի վաղ կոչվել է Անտառազուրկ կամ Վերին Բասեն[39], նաև՝ Փոքր Բասեն[40]: Այդ դեպքում խնդիր է ծագում՝ ինչպես զանազանել, թե երկու բասենցիներից ո՞րն է բուն Վանանդի եպիսկոպոսը: Եթե առաջնորդվենք այն տրամաբանությամբ, որ Ուխտանեսյան ցանկում Վանանդի եպիսկոպոսը 15-րդն է, իսկ Բասենինը՝

---

[29] Ադոնց. 1987, 280–281, Ալիշան. 1890, 430–431, Ոսկեան. 1954, 329, Հայկական սովետական հանրագիտարան. 1977, 391:

[30] Եղիշե. 1989, 234:

[31] Փարպեցի. 1982, 168:

[32] Փարպեցի. 1982, 176:

[33] Ադոնց. 1987, 280–281, Ալիշան. 1890, 430–431:

[34] Ադոնց. 1987, 281, Ալիշան. 1890, 431:

[35] Ադոնց. 1987, 294:

[36] Տե՛ս Փարպեցի. 1982, 168:

[37] Ոսկեան. 1954, 330–331:

[38] Գիրք թղթոց. 1994, 148:

[39] Эмин. 1881, 3.

[40] Գարեգին Ա Կաթողիկոս. 1951, 12:

11-րդը, այսինքն՝ առաջինիս դիրքն ավելի ցածր էր, հետևապես՝ Սամուելին պետք է համարենք մեր քննության առարկա թեմի առաջնորդ:

Շուրջ կես դար անց՝ արդեն 554 թ., Դվինի Բ ժողովին մասնակցել և «Ուխտ միաբանութեան» արձանագրության տակ ստորագրել է «Յովնան Վանանդայ» եպիսկոպոսը[41]: Ըստ Հայր Ղ. Ալիշանի՝ Յովնան Վանանդեցին աթոռակալել է 527–554 թթ.[42]: Ժողովին ներկա ավելի քան 30 նախարարների թվում է եղել Աստուածատուր Վանանդեցին[43]:

Նեստորականության տարածման մտահոգությամբ Հովհաննես Բ Գաբեղյան կաթողիկոսի (557–574)՝ Սյունյաց Վրթանես եպիսկոպոսին և Աղվանից Աբաս կաթողիկոսին (551–595) ուղղված երկու թղթերը, որոնք գրվել են 564–572 թթ. ընթացքում, ստորագրել է Վանանդի եպիսկոպոս Գյուտը[44]:

Հաջորդ պատմական վկայությանը Վանանդի եպիսկոպոսության վերաբերյալ իրազեկվում ենք Դվինի Գ ժողովից (606/607 թ.), որին ներկա է գտնվել Վանանդի Ներսես եպիսկոպոսը[45]: Իսկ, ահա, Դվինի Դ (645 թ.) և Ե (648 թ.) եկեղեցական ժողովներին իր մասնակցությունն է ունեցել Իսրայել եպիսկոպոսը[46], որը հետագայում օծվել է Հայոց Մեծաց կաթողիկոս՝ Իսրայել Ա Ոթմսեցի (667–677): Նա իր կաթողիկոսության շրջանում պայքարել է երևութականության և պավլիկյան աղանդի դեմ[47]:

Վանանդի թեմի հաջորդ աթոռակալ, ըստ պատմական աղբյուրների, հիշատակվում է Սբ. Հովհան Օձնեցու (717–728) հրավիրած Մանազկերտի 726 թ. հայ-ասորական համատեղ ժողովի մասնակից Գրիգոր եպիսկոպոսը[48]:

Հավանաբար, Վանանդի թեմակալի պաշտոնում Գրիգորին հաջորդել է Տրդատը, որը հետագայում ձեռնադրվել է Հայոց հայրապետ՝ Տրդատ Ա Ոթմսեցի (741–764): Ըստ VIII դ. պատմագիր Ղևոնդի՝ Տրդատ կաթողիկոսը Վանանդ գավառի նախարարական տնից էր[49]: Հովհաննես Դրասխանակերտցու վկայությամբ, ինչպես մեջբերում է Մ. Օրմանյանը, Տրդատ Ա Ոթմսեցին եղել է «այր սուրբ և պարկեշտ, և փայլեալ առաքինութեամբ: Յաւուրս նորա ասպատակք չար հինից յամենայն ուստեք դադարեալ լինէին ի սաղրելոյ սրբութեան աղօթից նորա»[50]:

Ուշադրության է արժանի այն փաստը, որ Վանանդից Պարտավի 768 թ. Բ կանոնական ժողովի մասնակիցներից արձանագրություններում նշվել է միայն Վահան նախարարի անունը[51]: Հայտնի էլ չէ՝ Վանանդի եպիսկոպոսն այդ հավաքին մասնակցե՞լ է, թե՞ ոչ, քանի որ Սիոն Ա Բավոնեցի կաթողիկոսը (767–

---

[41] Օրմանեան. 2001, 637:
[42] Ալիշան. 1890, 76:
[43] Գիրք թղթոց. 1994, 201, Օրմանեան. 2001, 637:
[44] Ա ճ ա ռ ե ա ն. 1942, 476:
[45] Ուխտանէս. 1871, 64:
[46] Հ ա կ ո բ յ ա ն. 1971, 214, Օ ր մ ա ն յ ա ն. 2001, 829:
[47] Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան. 2002, 405:
[48] Օ ր մ ա ն ե ա ն. 2001, 977:
[49] Ղ և ո ն դ. 1982, 110:
[50] Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց. 1912, 105, Օ ր մ ա ն ե ա ն. 2001, 1011:
[51] Կանոնագիրք Հայոց. 1971, 6, Օ ր մ ա ն ե ա ն. 2001, 1027:

775) հոգևորականներին թույլ էր տվել ժողովում ընդունվելիք կանոններին գրավոր հավանություն տալ՝ առանց մասնակցություն բերելու:

Մեզ հայտնի հետագա աղբյուրներում Վանանդի վաղմիջնադարյան շրջանի եպիսկոպոսի հիշատակություն չենք գտնում: Այսպիսով, բուն Վանանդի եպիսկոպոսների ցանկը IV–VIII դարերում ստանում է հետևյալ տեսքը.

Տիրիկես – IV դարի I կես,

Զորթվազ – IV դարի II կես,

Գադ (Գագ) – V դարի կես,

Գյուտ Արահեզացի – V դարի II կես, հետագայում՝ Հայոց Մեծաց կաթողիկոս՝ Գյուտ Ա Արահեզացի (Ոթմսեցի)՝ 461–471/4 թթ.,

Հովհան Արահեզացի – V դարի II կես, հետագայում՝ Հայոց Մեծաց կաթողիկոս՝ Հովհան Արահեզացի (471/4–481/2),

Բաբկեն Ոթմսեցի – V դարի վերջ, հետագայում՝ Հայոց Մեծաց կաթողիկոս՝ Բաբկեն Ա Ոթմսեցի (490–516),

Սամուել – VI դարի սկիզբ (506 թ.),

Հովնան – VI դարի կես (554 թ.),

Գյուտ – 564–572 թթ.,

Ներսես – VII դարի սկիզբ (606/7 թ.),

Իսրայել – VII դարի կես (645 թ., 648 թ.), հետագայում Հայոց Մեծաց կաթողիկոս՝ Իսրայել Ա Ոթմսեցի (667–677 թ.),

Գրիգոր – VIII դարի I կես (726 թ.),

Տրդատ – VIII դարի կես, հետագայում Հայոց Մեծաց կաթողիկոս՝ Տրդատ Ա Ոթմսեցի (741–764)[52]:

Ներկայացվող ցանկից ակնառու է Հայոց եկեղեցու պատմության մեջ վաղ միջնադարում Վանանդի եպիսկոպոսության խաղացած ազդեցիկ դերը. հինգ թեմական արժանացել է Հայոց կաթողիկոսի գահին:

Եզրակացություն

Այսպիսով, Վանանդի եպիսկոպոսական աթոռին (IV–VIII դդ.) մեզ հայտնի սկզբնաղբյուրներում տեսնում ենք տասներեք թեմական (Ալիշանյան ցանկին մեր կողմից հավելվել է վեց թեմական առաջնորդի անուն), որոնցից առավել հայտնի են հետագայի կաթողիկոսներ Սբ. Գյուտ Ա Արահեզացին և Բաբկեն Ա Ոթմսեցին, որոնք կարևորագույն դերակատարություն են ունեցել երկրի ներքաղաքական կյանքում, ներեկեղեցական և միջեկեղեցական հարաբերություններում:

Վանանդի թեմական կենտրոնը, ըստ էության, գավառի Ոթմուս գյուղն էր, որտեղ աքսորից հետո հաստատվեց Հայոց Մեծաց կաթողիկոս Գյուտ Արահեզացին: Բացի այդ, Ոթմսեցի պատվանունն են կրում չորս կաթողիկոսներ:

Աղբյուրների համեմատական քննությամբ պարզվում է, որ Վանանդեցի և Դիմաքսյան նախարարները եղել են տոհմակիցներ:

---

[52] Ղ. Ալիշանի ցանկում յոթ թեմակալի անունն է՝ «... Զորթուազ, 450 Գադ, 495 Բաբգէն, յետոյ կաթողիկոս, 527–54 Յովնան՝ ի ժողովս Դունայ յիշեալ, 572 Գիտ, 607 Ներսէս, 665 Իսրայէլ» (Ա լ ի շ ա ն. 1890, 76):

Վարդանանց շարժման ոգեկոչողը Սբ. Ղևոնդ երեց Վանանդեցին էր, վաղ ճգնավորական կյանքի դրույթների հեղինակը՝ Սբ. Թաթուլ Վանանդեցին:

Աշոտ Մանուչարյան – պ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ վիմագրագիտություն, Միջնադարյան Հայաստանի քաղաքական պատմություն, Հայոց եկեղեցու պատմություն, պատմամշակութային հուշարձաններ, հայկական պատմական և ժամանակակից աղանդներ: Հեղինակ է 7 գրքի, ավելի քան 80 հոդվածի և հրապարակումների: ORCID:0009-0007-7783-8580; ashot.manucharyan.1959@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ադոնց Ն. 1987, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում: Քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, Երևան, «Հայաստան» հրատ., 639 էջ:

Ալիշան Ղ. 1890, Այրարատ բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, Ս. Ղազար տպ., 590 էջ:

Աճառեան Հ. 1942, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, ԵՊՀ հրատ., 634 էջ:

Գալուստեան Շ. Արքեպս. 1997, Հայազգի սուրբեր, Երևան, «Գանձասար» աստուածաբանական կենտրոնի հրատ., 428 էջ:

Գարեգին Ա Կաթողիկոս. 1951, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ տպ., 1255 էջ:

Գիրք թղթոց. 1994, երկրորդ հրատարակութիւն (աշխատասիրութեամբ՝ Նորայր արքեպս. Պողարեանի), Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 712 էջ:

Եղիշե. 1989, Վարդանի և Հայոց պատերազմի մասին (աշխարհաբար թարգմ. և ծանոթ. Ե. Տեր-Մինասյանի), Երևան, ԵՊՀ հրատ., 448 էջ:

Կանոնագիրք հայոց. 1964, հ. Ա, աշխատասիրությամբ՝ Վ. Հակոբյանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 740 էջ:

Կանոնագիրք հայոց. 1971, հ. Բ, աշխատասիրությամբ՝ Վ. Հակոբյանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 473 էջ:

Հայկական սովետական հանրագիտարան. 1977, հ. 3, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 720 էջ:

Ղազար Փարպեցի. 1982, Հայոց պատմություն. Թուղթ Վահան Մամիկոնյանին (քննական բնագիրը՝ Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, աշխարհաբար թարգմ. և ծանոթ.՝ Բ. Ուլուբաբյանի), Երևան, ԵՊՀ հրատ., 540 էջ:

Ղազարյան Ա. 1996, Հայ եկեղեցու թեմական բաժանումը IV դարում. – ՊԲՀ, № 1–2, էջ 193–206:

Ղևոնդ. 1982, Պատմություն (աշխարհաբար թարգմ., ներած. և ծանոթ.՝ Ա. Տեր-Ղևոնդյանի), Երևան, «Սովետական գրող» հրատ., 184 էջ:

Մաղաքիա արքեպս. Օրմանեան. 2001, Ազգապատում, հ. Ա, Սբ. Էջմիածին, Մայր Աթոռի հրատ., 1870 սյուն:

Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց. 1912, Թիֆլիս, տպ. Ն. Աղանանցի, 427 էջ:

Ոսկեան Հ. 1954, Դիմաքսեան նախարարութիւնը.– «Հանդէս ամսօրեայ» (Վիեննա), թիւ 7–8, սյուն. 328–333:

Սահակյան Ա. 2016, Մամիկոնյանների քաղաքական վերելքը և տոհմաբանական լեգենդը (V–VII դդ.). – «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», № 3, էջ 18–34:

Սոփէրք հայկականք. 1854, հ. ԺԱ, Վենետիկ, Մխիթարեանց տպ., 60 էջ:

Ուխտանէս եպիսկոպոսի Պատմութիւն Հայոց. 1871, հ. Ա, Վաղարշապատ, տպ. Ս. Էջմիածնի, 116 էջ:

Ուխտանէս եպիսկոպոս. 1871, հ. երկրորդ, Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց, Վաղարշապատ, տպ. Ս. Էջմիածնի, 141 էջ:

Փավստոս Բուզանդ. 1987, Հայոց պատմություն (Բնագիրը՝ Ք. Պատկանյանի, թարգմ. և ծանոթ. Ստ. Մալխասյանի), Երևան, ԵՊՀ հրատ., 456 էջ:

Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան. 2002, Երևան, Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 1076 էջ:

Эмин Н. 1881, Армянскія надписи въ Карсѣ, Ани и въ окрестностяхъ послѣдняго. М., Тип. быв. А. Б. Кудрявцевой, 88 с.

ЕПИСКОПАЛЬНАЯ ЕПАРХИЯ ВАНАНДА (IV–VIII века)

АШОТ МАНУЧАРЯН

Резюме

Ключевые слова: епископство, епархия, Ванад, древний, главный, центральный, место, средневековье, национально-церковный, католикос.

Епископство Ванада было одной из 12/13 древних епархий Армении, которые были подтверждены Св. Григорем Просветителем в начале IV века. Спустя некоторое время, со вторым епархиальным отделением Св. Григория Просветителя, она стала 15-й среди 30 (36) основных епархий Армении, занимая центральное место. Епископство Ванада играло решающую роль в национально-церковных делах страны в раннем средневековье.

В V–VIII вв. в армянских историографических источниках упоминаются 13 епископов Ванандской епархии (Тирикес – I половина IV в., Зортваз – II половина IV в., Гад (Гаг) – половина V в., Гют Арахезаци – II половина V в., Иоан Арахезаци – II половина V в., Бабкен Вотмсеци – конец V века, Самуел – 506 г., Овнан – 554 г., Гют – 564–572 гг., Нерсес – 606/607 г., Исраел – 645 г., 648 г., Григор – 726 г., Тиридат – половина VIII в.). К списку Алишана нами добавлено шесть имен епископов. Пять из 13-и стали Армянскими католикосами (Гют I Арахезаци: 461–471/4 гг., Иоан Арахезаци: 471/4–481/2 гг., Бабкен I Вотмсеци: 490–516 гг., Исраел I Вотмсеци: 667–677 гг., Тиридат I Вотмсеци: 741–764 гг.). Эти католикосы носят имя Вотмсеци, так как центром Ванандской епархии, в сущности, было село Вотмус, где после ссылки обосновался католикос Гют I Арахезаци (Вотмсеци).

Ашот Манучарян – к. и. н., доцент, старший научный сотрудник отдела эпиграфики Института археологии и этнографии НАН РА. Научные интересы: эпиграфика, политическая история средневековой Армении, история Армянской церкви, историко-культурные памятники, армянские исторические секты и современные секты. Автор 7 книг, более 80 статей и публикаций. ORCID:0009-0007-7783-8580; ashot.manucharyan.1959 @mail.ru

EPISCOPAL DIOCESE OF VANAND
(IV–VIII centuries)

ASHOT MANUCHARYAN

S u m m a r y

Keywords: episcopacy, diocese, Vanand, ancient, main, central, place, Middle Ages, national church, Catholicos.

The episcopacy of Vanand was one of the ancient 12/13 dioceses of Armenia, which were confirmed by St. Gregory the Illuminator at the beginning of the 4th century. Some time later, with the second diocesan branch of St. Gregory the Illuminator, it became the 15th among the 30 (36) major dioceses of Armenia, occupying a central place. The episcopacy of Vanand played a decisive role in the national church affairs of the country in the early Middle Ages.

In the V–VIII centuries, Armenian historiographical sources mention 13 bishops of the Vananda diocese (Tirikes – 1st half of the 4th century, Zortvaz - 2nd half of the 4th century, Gad or Gag – half of the 5th century, Gyut Arahezatsi – 2nd half of the 5th century, Ioan Arahezatsi – 2nd half of the 5th century, Babken Votmsetsi-end of the 5th century, Samuel – in 506, Hovnan-in 554, Gyut-from 564 to 572, Nerses – in 606/607, Israel– in 645, 648, Grigor– in 726, Tiridates – half of the 8th century). We added six more names of bishops on the list of Alishan. Five out of thirteen became Armenian Catholicoi (Gyut I Arahezatsi: 461–471/4, Ioan Arahezatsi: 471/4–481/2, Babken I Votmsetsi: 490–516, Israel I Votmsetsi: 667– 677, Tiridates I Votmsetsi: 741–764). These Catholicoi bear the name Votmsetsi, since the center of the Vanand diocese was, in essence, the village Votmus where Catholicos Gyut I Arahezatsi (Votmsetsi) settled after living in exile.

Ashot Manucharyan – Candidate of Historical Sciences, Associate Professor, Senior Researcher at the Department of Epigraphy of the Institute of Archeology and Ethnography of NAS RA. Scientific interests: epigraphy, political history of medieval Armenia, history of the Armenian Church, historical and cultural monuments, Armenian historical and modern sects. Author of 7 books, more than 80 articles and publications. ORCID:0009-0007-7783-8580;ashot.manucharyan.1959@mail.ru